**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի վերաբերյալ**

**Վարկային համաձայնագրի անվանումը՝** Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 06.08.2014թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 03.02.2015թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 40.0 մլն ԱՄՆ դոլար (ըստ վարկային համաձայնագրի փոփոխություն № 1-ի՝ (2017թ. հունիսի 8) 37.5 մլն ԱՄՆ դոլար, ըստ փոփոխություն № 2-ի (2019թ. դեկտեմբերի 24) 36.0 մլն ԱՄՆ դոլար)
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** բազային դրույքաչափ (SOFR Index) + ՀԲ փոփոխական սփրեդ
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 31.12.2023թ.
**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝**
15.08.2024թ. - 15.02.2039թ.

**Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային ծրագրի անվանումը՝** Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում

**Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝** Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
**Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 02.02.2015թ.
**Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 03.02.2015թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված գումարը՝** 40.0 մլն ԱՄՆ դոլար (ըստ ենթավարկային համաձայնագիր №1-ի՝ (2018թ. հուլիսի 13) 37.5 մլն ԱՄՆ դոլար, ըստ ենթավարկային համաձայնագիր (2020թ. փետրվարի 14) №2-ի՝ 36.0 մլն ԱՄՆ դոլար)
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** բազային դրույքաչափ (SOFR Index) + ՀԲ փոփոխական սփրեդ + 1%
**Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 31.12.2023թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝** 15.08.2024թ. - 15.02.2039թ.

**Ծրագրի նպատակը՝** ծրագրի շրջանակներում նախատեսվում է փոխարինել 220/110/10 կՎ «Հաղթանակ» («Հաղթանակ» ենթակայանի վերակառուցման աշխատանքներն ավարտվել են 30.05.2019թ.-ին), 110/10/6 կՎ «Վանաձոր-1» և 110/10 կՎ «Չարենցավան-3», 220/110/10 կՎ «Զովունի» ենթակայանների 30 և ավել տարիներ շահագործման մեջ գտնվող ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումները:

**Ակնկալվող արդյունքները՝** Բարձրացնել սպառողների անխափան էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիությունը, նվազեցնել ենթակայանների շահագործման ծախսերը:

**Ծրագրի խորհրդատուի անվանումը՝** «Decon international GmbH/ Consulectra Unternemensberatung GmbH»
**Պայմանագրի անվանումը՝** «Հաղթանակ», «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» ենթակայանների վերակառուցման իրականացման օժանդակության և վերակառուցման վերահսկողության խորհրդատվական ծառայություն

**Պայմանագրի գումարը՝** 848,480.02 եվրո՝ ներառյալ ոչ ռեզիդենտի շահութահարկը
**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 08.12.2016թ.
**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 08.12.2016թ.
**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը՝**
08.12.2016թ. - 30.06.2023թ.

**Ծրագրի խորհրդատուի անվանումը՝** «Արամ Կարապետյան» անհատ ձեռնարկատեր
**Պայմանագրի անվանումը՝** 220 կՎ «Զովունի» և 110 կՎ «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման վերահսկողություն № ESRAF-SSS-1-2021
**Պայմանագրի գումարը՝** 46,757,093.78 ՀՀ դրամ
**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 28.07.2021թ.
**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 03.05.2021թ.
**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը՝**
03.05.2021թ. - 28.05.2024թ.

**Ծրագրի կապալառուներ՝**

1. Kaskad-Energo LLC
   **Պայմանագրի անվանումը՝** «220/110/10 կՎ «Հաղթանակ» ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում», № HV-W-ESRAF-1/2015_1
   **Պայմանագրի գումարը՝** 13,831,650.00 ԱՄՆ դոլար
   **Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 01.07.2016թ.
   **Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 26.08.2016թ.
   **Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը՝**
   26.08.2016թ. - 30.05.2019թ.

2. Xian Electric Engineering Co. Ltd
   **Պայմանագրի անվանումը՝** «110/10/6 կՎ «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում», № HV-W-ESRAF-1/2015_3
   **Պայմանագրի գումարը՝** 4,083,875.5 ԱՄՆ դոլար
   **Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 01.07.2016թ.
   **Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 01.09.2016թ.
   **Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը ՝**
   01.09.2016թ. -31.12.2018թ.

3. Efacec Engenharia e Sistemas S.A

**Պայմանագրի անվանումը՝** «110 կՎ «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում», № HV-W-ESRAF-1/2015_2

**Պայմանագրի գումարը՝** 2,521,639.29 ԱՄՆ դոլար
2,946,265.35 եվրո
658,639,773.67 ՀՀ դրամ

**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 01.07.2016թ.

**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 13.09.2016թ.

**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը ՝**
13.09.2016թ. - 16.03.2023թ. (2021թ. մարտի 12-ին «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության և Efacec Engenharia e Sistemas S.A միջև ստորագրված պայմանագրի Փոփոխություն 3-ի համաձայն, աշխատանքների ավարտման ժամկետը պետք է լինի 23 ամիս՝ հաշվարկված «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կողմից փոխհատուցման ենթակա ծախսի (900 000.0 եվրո) վճարման օրվանից)

4. China National Electric Engineering Co. Ltd

**Պայմանագրի անվանումը՝** 220կՎ «Զովունի» ենթակայանի վերակառուցման նախագծման, մատակարարման և մոնտաժման պայմանագիր № HVEN-DSI-1/2020_2

**Պայմանագրի գումարը՝** 7,946,093.08 ԱՄՆ դոլար

**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 15.09.2021թ.

**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 28.09.2021թ.

**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը ՝**
28.09.2021թ. -28.05.2024թ.

**Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները 31.12.2022թ. դրությամբ՝**

Խորհրդատվական ծառայություններ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 835,491.3 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 197,287.0 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 1,032,778.3 ԱՄՆ դոլար*

Kaskad-Energo LLC կողմից կատարված շինմոնտաժային աշխատանքներ

- *Վարկային միջոցների հաշվին - 3,368,580.0 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 673,716.0 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 4,042,296.0 ԱՄՆ դոլար*

Kaskad-Energo LLC կողմից մատակարարված սարքեր և սարքավորումներ

- *Վարկային միջոցների հաշվին - 10,463,070.0 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 215,600.0 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 10,678,670.0 ԱՄՆ դոլար*

Xian Electric Engineering Co. կողմից կատարված շինմոնտաժային աշխատանքներ

- *Վարկային միջոցների հաշվին - 1,925,494.6 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 403,549.5 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 2,329,044.1 ԱՄՆ դոլար*

Xian Electric Engineering Co. կողմից մատակարարված սարքեր և սարքավորումներ

- *Վարկային միջոցների հաշվին - 2,158,382.8 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 72,655.2 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 2,231,038.0 ԱՄՆ դոլար*

EFACEC Engenharia e Sistemas, S.A կողմից մատակարարված սարքեր և սարքավորումներ

- *Վարկային միջոցների հաշվին - 1,972,836.2 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 181,618.9 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 2,154,455.1 ԱՄՆ դոլար*

EFACEC Engenharia e Sistemas, S.A կողմից կատարված շինմոնտաժային աշխատանքներ

- *Վարկային միջոցների հաշվին - 105,807.9 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 21,161.6 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 126.969.5 ԱՄՆ դոլար*

Այլ ծախսեր՝ ներառյալ փոխհատուցվող ծախս

- *Վարկային միջոցների հաշվին - 1,184,566.2 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 222,397.9 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 1,406,964.1 ԱՄՆ դոլար*

Ընդհանուր կատարված աշխատանքները, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին - 22,014,229.0 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 1,987,986.1 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 24,002,215.1 ԱՄՆ դոլար*

**Ծրագրի շրջանակներում կատարված վճարումները 31.12.2022թ. դրությամբ՝**

Խորհրդատվական ծառայություններ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 822,281.4 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 193,655.1 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 1,015,936.5 ԱՄՆ դոլար*

Kaskad-Energo LLC կողմից կատարված շինմոնտաժային աշխատանքների դիմաց՝

- *Վարկային միջոցների հաշվին - 3,368,580.4 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 673,716.0 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 4,042,296.4 ԱՄՆ դոլար*

Kaskad-Energo LLC մատակարարված սարքերի և սարքավորումների դիմաց՝

- *Վարկային միջոցների հաշվին - 10,327,745.3 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 215,600.0 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 10,543,345.3 ԱՄՆ դոլար*

Xian Electric Engineering Co. կողմից կատարված շինմոնտաժային աշխատանքների դիմաց՝

- *Վարկային միջոցների հաշվին - 1,496,014.5 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 496,311.4 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 1,992,325.9 ԱՄՆ դոլար*

Xian Electric Engineering Co. կողմից մատակարարված սարքերի և սարքավորումների դիմաց՝

- *Վարկային միջոցների հաշվին - 1,832,774.6 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 74,003.8 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 1,906,778.4 ԱՄՆ դոլար*

EFACEC Engenharia e Sistemas, S.A կատարված շինմոնտաժային աշխատանքների դիմաց՝

- *Վարկային միջոցների հաշվին - 384,518.9 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 21,561.5 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 406,080.4 ԱՄՆ դոլար*

EFACEC Engenharia e Sistemas, S.A կողմից մատակարարված սարքերի և սարքավորումների դիմաց՝

- *Վարկային միջոցների հաշվին - 2,127,147.1 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 180,760.5 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 2,307,907.6 ԱՄՆ դոլար*

China National Electric Engineering Co. Ltd ընկերությանը վճարված կանխավճար

- *Վարկային միջոցների հաշվին - 1,986,523.3 ԱՄՆ դոլար*

Այլ ծախսեր՝ ներառյալ փոխհատուցվող ծախս

- *Վարկային միջոցների հաշվին - 1,201,951.5 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 234,064.9 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 1,436,016.4 ԱՄՆ դոլար*

Ընդհանուր կատարված վճարումները, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին - 23,547,537.0 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 2,089,673.2 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը 25,637,210.2 ԱՄՆ դոլար*

**Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝** ավարտվել են «Հաղթանակ» ենթակայանի վերակառուցման աշխատանքները:
Պատվիրատուի և չինական «Xian Electric Engineering Co. Ltd» ընկերության միջև 2016թ. հուլիսի 1-ին կնքված «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում» № HV-W-ESRAF-1/2015_3 պայմանագրի համաձայն՝ «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման աշխատանքների կատարման ժամկետի ավարտ է սահմանվել 2018թ. դեկտեմբերի 31-ը: Ենթակայանում աշխատանքների դանդաղ տեմպերի պատճառով վերակառուցման աշխատանքները դեռևս չեն ավարտվել: Եվ քանի

որ պայմանագրով նախատեսված աշխատանքների՝ սահմանված ժամկետներում չավարտելը կողմերին չի ազատում պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից, պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտման ժամկետի երկարաձգում չի նախատեսվում: 2022թ. ընթացքում «Վանաձոր-1» ենթակայանում իրականացվել են էլեկտրամոնտաժային և կարգաբերման աշխատանքներ, և ենթակայանը ամբողջությամբ դրվել է լարման տակ:

«Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման ծրագրի շրջանակներում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության և «EFACEC Engenharia e Sistemas, S.A.» (Պորտուգալիա) ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև 2021թ. մարտի 12-ին կնքվել և ուժի մեջ է մտել պայմանագրի Փոփոխություն № 3-ը, որով վերամեկնարկվել են ենթակայանի վերակառուցման աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում Կապալառուն՝ էլեկտրամոնտաժային աշխատանքների մասով ենթակապալառուի հետ տեղանքում ուսումնասիրել է ենթակայանի ամբողջական հոսանքազրկման նպատակով փոխանջատումների ծրագիրը և դրանց ժամկետները: 2022թ. դեկտեմբեր ամսին Կապալառուի կողմից ներկայացվել են իրականացված նախագծային և շինարարական աշխատանքների դիմաց հաշիվ-ապրանքագրերը, որոնց դիմաց ընկերության կողմից իրականացվել են համապատասխան վճարումները:

Վերամեկնարկած պայմանագրի շրջանակներում «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2023թ.:

Կառավարման խորհուրդը 2021թ. հուլիսի 23-ի N 3-06-07-21 որոշմամբ հաստատել է «Զովունի» ենթակայանի վերակառուցման կապալառուի ընտրության մրցույթի արդյունքը՝ հաղթող ճանաչելով China National Electric Engineering Co., LTD ընկերությանը (այսուհետ՝ Կապալառու): «Զովունի» ենթակայանի վերակառուցման շրջանակներում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության և Կապալառուի միջև 2021թ. սեպտեմբերի 15-ին ստորագրվել է 220կՎ «Զովունի» ենթակայանի վերակառուցման նախագծման, մատակարարման և մոնտաժման պայմանագիր № HVEN-DSI-1/2020_2-ը, որն ուժի մեջ է մտել 2021թ. սեպտեմբերի 28-ին՝ կանխավճարի վճարման պահից: Շինարարության թույլտվություն ստանալու նպատակով Ընկերությունը 2022թ. մայիսին դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետարան: 2022թ. հունիսի 15-ին Երևանի քաղաքապետարանը մերժել է դիմումը, հիմնավորելով որ նախագիծը պետք է անցնի համալիր փորձաքննություն: Կապալառուն փաստաթղթերը ներկայացրել է համալիր փորձաքննության, և այն գտնվում է տարբեր գերատեսչությունների ուսումնասիրության փուլում: Մշակված և մասնագիտական փորձաքննություն անցած նախագծերը պետական համալիր փորձաքննության ենթարկելու նպատակով Կապալառուն 2022թ. հուլիսին դիմել էր ՀՀ քաղաքաշինության կոմիտե, իսկ 2022թ սեպտեմբերի 28-ին ստացվել է դրական եզրակացությունը (N 226): 2022թ. դեկտեմբերի 27-ին Պատվիրատուն ստացել է շինարարության թույլտվությունը, և ենթակայանում մեկնարկել են վերակառուցման աշխատանքները:

Ծրագիրն իրականցվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից: